Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 880 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց առաջնային կարիքների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 2) «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ հասցե՝ 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Կանադա 3) «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Թայվան 4) «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ հասցե՝ Rue du Pré-de-la-Bichette 1, 1202 Ժնև, Շվեյցարիա 5) «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ հասցե՝ 9 Rue Ampere, 75017 Փարիզ, Ֆրանսիա 6) «Վորլդ Վիժն» Գերմանիայի աջակցող գրասենյակ հասցե՝ Am Zollstock 2 - 4 Friedrichsdorf, 61381,Գերմանիա. 7) "Հայաստան" համահայկական հիմնադրամ հասցե՝ Հայաստան, 0024 Երևան, Բաղրամյան 26/1
4.	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ

		(Հասցե՝ քաղաք Երևան, Ռ. Մելիքյան փողոց. 1, ՀՎՀՀ՝ 02528755)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը ՝ սոցիալական
6	Ծրագրի բյուջեն	700,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք:
8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հաշվետու ժամանակահատվածում սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները. Լեռնային Ղարաբաղից տեղահանված կարիքավոր ընտանիքներին ընձեռնել սոցիալական և տնտեսական ինտեգրման ավելի լայն հնարավորություններ՝ սոցիալական և տնտեսական ինտեգրման հմտությունների երկարաժամկետ զարգացնման և համապատասխան աջակցություն/նյութական օգնության միջոցով: Բյուջե՝ 700,000,000 դրամ, ժամկետ՝ 2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը 1) Հիգիենիկ,տնտեսական և կենցաղային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 100,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը 2) Անկողնային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 117,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը 3) Մանդի փաթեթների ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 150,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը 4) Բիո վառելիքի (փայտ) ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 50,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը 5) Հագուստի ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 125,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը

		6) Կենցաղային տեխնիկայի ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 125,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը 7) Կանխիկ դրամական աջակցություն՝ 33,000,000, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման շրջանակներում ձեռք բերվող ապրանքներն ու ծառայությունները և դրանց արժեքները: 1. Հիգիենիկ,տնտեսական և կենցաղային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 100,000,000 դրամ 2. Անկողնային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 117,000,000 դրամ 3. Մնդի փաթեթների ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 150,000,000 դրամ 4. Բիո վառելիքի ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 50,000,000 դրամ 5. Հագուստի ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 125,000,000 դրամ 6. Կենցաղային տեխնիկայի ձեռքբերում և տրամադրում՝ շուրջ 125,000,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքային սոցաշխատողների, մանկապարտեզների, եկեղեցիների, ոստիկանության, համայնքներում գործող դպրոցների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության կենտրոնների հետ, ինչպես նաև առաջնորդվում է e-soc.am առաջնային կարիքների ներկայացման հարթակում գրանցված ընտանիքների տվյալներով:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ